# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 440

## «ՍԿՍ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՍԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Սևադա Ծատուրյանի 2022 թվականի օգոստոսի 22-ի թիվ 01/9828 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Սպիտակ քաղաքի Ոփյան փող. 1-ին նրբ.թիվ 5 հասցեում գործող «ՍԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Սևադա Ծատուրյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Գր.Լուսավորչի փող. թիվ 29ա հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 441

### «ՍԿՍ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՍԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Սևադա Ծատուրյանի 2022 թվականի օգոստոսի 22-ի թիվ 01/9827 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Սպիտակ քաղաքի Ոփյան փող. 1-ին նրբ.թիվ 5 հասցեում գործող «ՍԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Սևադա Ծատուրյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 81-1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 442

### «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանի կողմից լիազորված անձ Էդմոնդ Սիմոնյանի 2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 01/9867 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Երևան քաղաքի Վ.Սարգսյանի փող. թիվ 26/1 հասցեում գործող «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանի կողմից լիազորված անձ Էդմոնդ Սիմոնյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Գր.Լուսավորչի փող. թիվ 40 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 443

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ ԹԻՎ 7 ՇԵՆՔ ԹԻՎ 36 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ղուշփերի Սերյոժայի Մեսրոպյանի 19.08.2022 թիվ 9783 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1749791 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի գյուղ Գուգարք թիվ 7 շենք թիվ 36 բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 7 շենք, 36 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 444

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՇՈՏ ԳԵՎՈՐԳԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Գևորգի Մկրտչյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01122016-06-0029 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 18.07.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-72/22 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 10.03.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20220436Y2), ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց 21 հասցեում գտնվող, Աշոտ Գևորգի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 244.79քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը 211.69) բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Աշոտ Գևորգի Մկրտչյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 244.79քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 784800 (յոթ հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 445

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՄԱՌԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Սամսոնի Ավետիսյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 25.08.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022PHDJLU), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց թիվ 10 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 24.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23.5քմ) մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 24.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մառանը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց թիվ 10 շենքի բակում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ազատամարտիկների փողոց, 10/9 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 446

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂ ԹԻՎ 116Բ/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՐՃԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոման Կամսարի Թամարյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1851832 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 21.07.2022թ. անշարժ գույքի առուվաճառքի թիվ 8035 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 769-20220721-2-6100190) ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Վարդանանց փող թիվ 116բ/8 հասցեում գտնվող սրճարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 116/3 առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 447

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ»-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ»-ի 2022 թվականի օգոստոսի 25-ի թիվ 01/10073 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Նարեկացի փող. թիվ 29/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ»-ի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Նարեկացի փող. թիվ 29/1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 448

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻԻ ՓՈՂՈՑ 1/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՄՎԵԼ ԳԱՌՆԻԿԻ ՄԵՍՐՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Գառնիկի Մեսրոբյանի 25.09.2021թ. թիվ 13606 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16122021-06-0069 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց 1/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 17.65քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.39քմ) ավտոտնակը 29530 (քսանինը հազար հինգ հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 18.0քմ մակերեսով հողամասը 51980 (հիսունմեկ հազար ինը հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սամվել Գառնիկի Մեսրոբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սամվել Գառնիկի Մեսրոբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 449

### ՆԱԻՐԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 05-Ի ԹԻՎ 206-Ա ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 06-Ի ԹԻՎ 184-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Ոսկանողական փողոցի թիվ 14 հանրակացարանի թիվ 314 սենյակի բնակիչ Նաիրա Էդուարդի Փանոսյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Նաիրա Էդուարդի Փանոսյանին (ծնվ. 1997թ.), Արթուր Լևոնի Սարգսյանին (ծնվ. 1991թ.), Նարեկ Արթուր Սարգսյանին (ծնվ. 2014թ.) և Հրայր Արթուր Սարգսյանին (ծնվ. 2021թ.) հատկացնել ժամանակավոր բնակմակերես՝ Վանաձոր համայնքի Ոսկանողական փողոցի թիվ 14 հանրակացարանի թիվ 314-315 սենյակները:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 2015 թվականի փետրվարի 05-ի «Ռիմա Էդուարդի Փանոսյանին բնակմակերես հատկացնելու մասին» թիվ 206-Ա և Վանաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 06-ի «Էդուարդ Հարությունի Փանոսյանին բնակմակերես հատկացնելու մասին» թիվ 184-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 450

### ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 146/53 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաթևիկ Գառնիկի Քյարամյանի դիմումը և Գառնիկ Վարազդատ Քարամյանի 03.11.2021 թվականին տրված թիվ ԲԱ 476760 մահվան մասին պետական վկայականը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորիչի փողոցի թիվ Ց-6-6 շենքի թիվ 27 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1999 թվականի փետրվարի 26-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 146/53 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումը՝

1.Որոշման նախաբանում «Գառնիկ Վարազդատի Քյարամյանը» բառերը փոխարինել «Գառնիկ Վարազդատ Քարամյանը» բառերով:

2. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Քյարամյան Գառնիկ Վ.» բառերը փոխարինել «Գառնիկ Վարազդատ Քարամյան» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 451

### ՌԻՄԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԹԻՎ 1285 ԱՆՆԱ ՌՈԲԵՐՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Ուխանողական փողոցի թիվ 14 հանրակացարանի թիվ 315 սենյակի բնակիչ Ռիմա Էդուարդի Փանոսյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ռիմա Էդուարդի Փանոսյանին (ծնվ. 1996թ.), Գալուստ Խաչիկի Սարյանին (ծնվ. 1992թ.), Եվա Գալուստ Սարյանին (ծնվ. 2014թ.) և Հարություն Գալուստ Սարյանին (ծնվ. 2016թ.) հատկացնել ժամանակավոր բնակմակերես՝ Վանաձոր համայնքի Ուխանողական փողոցի թիվ 14 հանրակացարանի թիվ 309 սենյակը:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 2008 թվականի օգոստոսի 28-ի «Աննա Ռոբերտի Մխիթարյանին բնակմակերես հատկացնելու մասին» թիվ 1285 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 օգոստոսի 2022 թվականի N 452

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 27/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԾԱԾԿԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՐԵՆ ՄԱՐԱՏԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Մարատի Գալոյանի լիազորված անձ՝ Արմեն Արարատի Շամիրյանի 30.01.2021թ. թիվ 02/1477 դիմումը, 23.10.2020թ. տրված թիվ 2116 (նոտարական ակտի կոդ: 843-20201023-90-4776383) լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28122021-06-0050 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ), դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Գ.Նարեկացու փողոց 27/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 102.79քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 85.38քմ, որից 22.63քմ՝ նկուղային հարկ, 62.75քմ՝ 1-ին հարկ) ավտոտնակը 174750 (հարյուր յոթանասունչորս հազար յոթ հարյուր հիսուն) դրամով, 10.81քմ մակերեսով ծածկը 36760 (երեսունվեց հազար յոթ հարյուր վաթսուն) դրամով, և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 84.7քմ մակերեսով հողամասը 162120 (հարյուր վաթսուներկու հազար հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սուրեն Մարատի Գալոյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սուրեն Գալոյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի, ծածկի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 30
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2022 թվականի N 453

ԴԱՎԻԹ ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալինա Իվանովնա Լուկաշի դիմումը անչափահաս Դավիթ Նարեկ Մելքոնյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2022 թվականի հուլիսի 28-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 4, կետ 2), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի թիվ 32 շենքի թիվ 16 բնակարանի բնակիչ Ալինա Իվանովնա Լուկաշին (ծնված՝ 23.08.1961թ., անձնագիր՝ (AT 0293092, տրված՝ 30.10.2019թ., 018-ի կողմից) նշանակել անչափահաս Դավիթ Նարեկ Մելքոնյանի (ծնված՝ 06.12.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 303445, տրված՝ 10.12.2013թ., ՔԿԱԳ Վանաձորի տ/բ-ի կողմից) նկատմամբ խնամակալ մեկ տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 30
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2022 թվականի N 454

### ԱՆՉԱՓԱՀԱՍ ԿՐԻՍՏԻՆԱ ԱՐԱՐԱՏՈՎՆԱ ԱՐԶԻԿՈՒԼՈՎԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Վաղինակի Հարությունյանի դիմումը անչափահաս թոռան՝ Կրիստինա Արարատովնա Արզիկուլովայի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2022թ. հուլիսի 28-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 4, կետ 1), ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տարոն-1, թիվ 2ա շենքի թիվ 8 բնակարանի բնակիչ Անահիտ Վաղինակի Հարությունյանին (ծնված՝ 15.01.1957թ., անձնագիր՝ AS 0607512, տրված՝ 14.05.2019թ., 018-ի կողմից) նշանակել թոռան՝ Կրիստինա Արարատովնա Արզիկուլովայի (ծնված՝ 06.11.2009 թ., ծննդյան վկայական՝ II-TH N 760963, տրված՝ Նիժնի Նովգորոդի մարզի ՔԿԱԳ գլխավոր վարչության Լուկոյանովսկի շրջանի ՔԿԱԳ բաժնի կողմից՝ 01.08.2012 թ., ծննդյան վայրը՝ Ռուսաստան, Նիժնի Նովգորոդի մարզ, Լուկոյանովսկի շրջան) նկատմամբ խնամակալ մեկ տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 30
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2022 թվականի N 455

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Պ. ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂ. ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՌՆԻԿ ՀՐԱՉԻԿԻ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ, ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1498 ԵՎ 25 ՀՈՒԼԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 270 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի (ծնված՝ 07.08.1960թ.) լիազորված անձ Լուսինե Գառնիկի Ներկարարյանի (ծնված՝ 15.06.1990թ.) դիմումը, 26.02.2021թ. թիվ 800 (նոտարական ակտի կոդ՝ 763-20210226-90-4957420) լիազորագիրը, 23.02.1987թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 06.04.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ թիվ 1975 (նոտարական ակտի կոդ՝ 763-20210403-84-5024940) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1977 (նոտարական ակտի կոդ՝ 763-20210403-84-5025000) վկայագրերը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 21.06.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-80/21 Ի եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 30.06.2022թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20223VVAQQ), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 21.06.2022թ. թիվ Կ-21062022-06-0116 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2021 թվականի թիվ 1498 և 25 հուլիսի 2022 թվականի թիվ 270 որոշումները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Պ. Պռոշյան փող. թիվ 4 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ և դրան կից 300.0քմ ու այն գերազանցող 33.3քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1955-2004թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 733.3քմ, որից 400.0քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև հավասար բաժնեմասերով: Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի բաժնեմասը կազմում է 533.3քմ (300+33.3+400:2):

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով,

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ» բառերով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Պ. Պռոշյան փող. թիվ 4 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ մակերեսով հողամասին կից 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ սահմանված 300.0քմ հողամասը գերազանցող 33.3քմ մակերեսով չկառուցապատված հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանին՝ դրա կադաստրային արժեքով՝ 147920 (հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քսան) դրամով: Բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 733.3քմ, որից 400.0քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև հավասար բաժիններով: Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի բաժնեմասը կազմում է 533.3քմ (300+33.3+400:2):

2. Ճանաչել Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Պ. Պռոշյան փող. թիվ 4 հասցեի 533.3քմ (300+33.3+400:2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, բացառությամբ 2001թ. մայիսի 15-ից հետո կառուցված 14.2քմ ընդհանուր մակերեսով պարիսպների և 12.49քմ մակերեսով բնակելի տան:

3. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 33.3քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Վանաձոր քաղաքի Պ. Պռոշյան փող. թիվ 4 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝Վանաձոր, Վանաձոր ք., Պ. Պռոշյան փողոց, թիվ 4/1 բնակելի տուն:

5. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Պռոշյան փողոց թիվ 4 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամաս օտարելու և նոր փոստային հասցե րամադրելու մասին» թիվ 1498 և 25 հուլիսի 2022 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2021 թվականի թիվ 1498 որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Վանաձոր համայնքի ղեկավարի 22 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 1938 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 270 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 30
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2022 թվականի N 456

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 123 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նունիկ Ժորայի Ասրյանի 18.05.2022թ. թիվ 4098 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 18.05.2022թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022FOIECY), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 123 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 23.6քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.78քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
3. Փոխել 0.00236հա հողամասի գործառնական նշանակությունը խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:
3. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 123 շենքի արևելյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Երևանյան խճուղի, 123/32 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր